Կարգապահական գործ թիվ ԿԳ-24179

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱԼԲԵՐՏԻ ՄԵՐԱՆԳՈՒԼՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետև նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Գուրգեն Թորոսյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Կարինե Բաղդասարյանի և Կարեն Խալաթյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ Դիմող Նունե Գյոկչյանի,

քննության առնելով փաստաբան Ալեքսանդր Ալբերտի Մերանգուլյանին **(այսուհետև նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 1958), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Նունե Գյոկչյանը **(այսուհետև՝ Դիմող)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետև՝ Պալատ)**, հայտնել է, որ 2023թ. սեպտեմբերին դիմել է փաստաբան Ալեքսանդր Մերանգուլյանին, ժառանգության հետ կապված վեճի շրջանակներում իրավական օգնություն ստանալու համար:

Դիմողը նշել է, որ Փաստաբանի հետ կնքվել է պայմանագիր, ըստ որի վերջինս պարտավորվել է ներկայացնել Դիմողի շահերը մինչև վճռաբեկ դատարան: Դիմողի պնդմամբ, Փաստաբանը չի տրամադրել պայմանագրի օրինակը:

Ըստ Դիմողի՝ ծառայությունների դիմաց Փաստաբանին վճարել է 300.000 ՀՀ դրամ:

Դիմողը հայտնել է, որ Փաստաբանը գործել է անբարեխղճ, մասնավորապես՝

Թիվ ԿԳ-24179-2-Ա
07.05.2025թ.

Փաստաբանը չի ներկայացրել դատարան Դիմողի տրամադրած ապացույցները, ինչի արդյունքում Դիմողի հայցը թիվ ԵԴ2/37070/02/23 քաղաքացիական գործով մերժվել է:

Դիմողը նշել է, որ առաջին ատյանի դատարանի որոշումը ստանալու օրվանից Փաստաբանը խուսափել է Դիմողի հետ կապի դուրս գալուց և փաստացի վերաքննիչ բողոք չի ներկայացրել: Դիմողը հայտնել է, որ հայտնվել է անելանելի վիճակում Փաստաբանի դրսևորած վարքագծի պատճառով, ինչի արդյունքում Դիմողը ստիպված է եղել դիմել հանրային պաշտպանի գրասենյակ:

Դիմողի պնդմամբ, Փաստաբանը չի պատասխանում զանգերին և չի վերադարձնում վճարված գումարները, ինչպես նաև փաստաթղթերը:

Վերոգրյալի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է փաստաբանին ենթարկել կարգապահական պատասխանատվության: Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 16.01.2024թ. Դիմողին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին օրենքի **(այսուհետև՝ Օրենք)** 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Դիմողը լրացուցիչ դիրքորոշում կամ ապացույց:

Դիմողը 24.01.2024թ. ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ իր և Փաստաբանի միջև կնքված պայմանագրում չի արտացոլվել վճարված գումարների ստացման փաստը:

Դիմողը նշել է, որ դիմել է օպերատորին, սակայն վերծանումներից չի երևում, որ Փաստաբանը զանգերին չի պատասխանել, քանի որ զանգերը իրականացվել են «WhatsApp» հավելվածի միջոցով: Բացի այդ, Դիմողը հավելել է, որ Փաստաբանը պարբերաբար փոխել է համարները:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Ալեքսանդր Մերանգուլյանին 26.11.2024թ.-ին առաջարկվել է՝ Օրենքի **39.2-րդ հոդվածի 4-րդ մասի** համաձայն ներկայացնել բացատրություն Նունե Գյոկչյանի դիմումի վերաբերյալ, սակայն որևէ բացատրություն չի ներկայացվել:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 16.01.2025 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն որևէ բացատրություն չի ներկայացվել:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Փաստաբանների պալատի նախագահի 11.12.2024թ. թիվ 421-Ա/ԿԳ-24179 որոշմամբ փաստաբան Ալեքսանդր Մերանգուլայնի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետև նաև՝ Կանոնագիրք) 2.7.2, 3.5.5 և 3.6.1** ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

17.12.2024թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Ծովինար Քուրքչյանին (**այսուհետև նաև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 17.02.2025թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-2-րդ կետերում նշված փաստերով:

Հանձնաժողովի նիստերը տեղի են ունեցել՝ 12.03.2025թ. ժամը 19:30-ին, 02.04.2025թ. ժամը 19:30-ին, 07.05.2025թ. ժամը 19:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբան Ալեքսանդր Մերանգուլյանը ստանձնել է Դիմող Նունե Գյուկչյանի իրավունքների պաշտպանությունը թիվ ԵԴ2/37070/02/23 քաղաքացիական գործով: *Սույն փաստը հաստատվում է ԵԴ2/37070/02/23 քաղաքացիական գործի վերաբերյալ «Datalex» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

2. Առաջին ատյանի դատարանի 18.10.2024թ. որոշմամբ Դիմողի հայցը մերժվել է և նշված դատական ակտը Փաստաբան Ալեքսանդր Մերանգուլյանի կողմից չի բողոքարկել: *Սույն փաստը հաստատվում է ԵԴ2/37070/02/23 քաղաքացիական գործի վերաբերյալ «Datalex» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Ալեքսանդր Մերանգուլյանը փաստաբան է հանդիսանում 30.04.2015 թվականից և 2020-2025թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Ալեքսանդր Մերանգուլյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման համար:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Կանոնագրքի 3.6.1. ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:*

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության

կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Նշվածի հաշվառմամբ, փաստաբանի վարքագծի կանոններով փաստաբանի համար սահմանվում են որոշակի պարտականություններ, այն է՝ ելնել վստահորդի նպաստավոր շահերից, բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը:

Ավելին, տրված հանձնարարության շրջանակներում փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ կարող են լինել վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ Փաստաբանը ստանձնել է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում՝ թիվ ԵԴ2/37070/02/23 քաղաքացիական գործի շրջանակներում: Քաղաքացիական գործով հայցի առարկան է հանդիսացել՝ կտակը և որպես գործարքի անվավերության հետևանք, ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը անվավեր ճանաչելու պահանջը:

Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 18.10.2024թ. որոշմամբ Դիմողի հայցը մերժել է, այն պատճառաբանությամբ, որ հայցվորը չի ապացուցել վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը՝ կտակի առկայությունը:

Հանձնաժողովը, անդրադառնալով Փաստաբանի վարքագծին, արձանագրում է, որ դատավարության շրջանակներում վերջինս հանդիսանում է պրոֆեսիոնալ և հատուկ սուբյեկտ, ում վրա դրված է իր վստահորդի լավագույն շահերի պաշտպանության պարտականությունը: Այս առումով, հարկ է նշել, որ Փաստաբանը պարտավոր է ձեռնարկել բոլոր օրենքով նախատեսված գործողություններն իր վստահորդի օրինական ակնկալիքներն արդարացնելու համար: Նշվածը ներառում է թե՛ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերին համապատասխան փաստերի ապացուցման կանոններին տիրապետումը, թե՛ նույն հարցի վերաբերյալ օրենքից բխող բացասական հետևանքների կանխատեսումը:

Տվյալ դեպքում, Փաստաբանը, իրականացնելով Դիմողի իրավունքների պաշտպանությունը թիվ ԵԴ2/37070/02/23 քաղաքացիական գործով, պարտավոր էր գործադրել բոլոր ջանքերն իր կողմից վկայակոչած փաստերի հաստատման համար: Ընդ որում, չնայած, Օրենքի համապատասխան՝ փաստաբանի մասնակցությամբ գործով ի վնաս նրա վստահորդի ընդունված ակտն ինքնին չի առաջացնում փաստաբանի կարգապահական պատասխանատվություն, այնուամենայնիվ, հարկ է նշել տվյալ իրավակարգավորումն իր բովանդակությամբ վերաբերում է միայն այնպիսի դեպքերի, երբ փաստաբանն առնվազն ձեռնարկում է իրենից կախված

ողջամիտ միջոցները վստահորդի իրավունքներն ու շահերը լավագույնս պաշտպանելու համար՝ ուստի միայն այդպիսի իրավիճակներում ի վնաս վստահորդի ընդունված ակտն էլ չի կարող առաջացնել կարգապահական պատասխանատվություն:

Հատկանշական է, որ Դիմողի դեմ կայացված դատական ակտի բողոքարկումը նույնպես ներառված է եղել մատուցվող ծառայությունների շրջանակում: Թեև սույն կարգապահական գործի նյութերում պայմանագիրը բացակայում է, սակայն 23.10.2023թ. լիազորագրի բովանդակությունից բխում է, որ Դիմողը լիազորել է Փաստաբանին լինելու իր ներկայացուցիչը ՀՀ դատական ատյաններում, ինպես նաև դատական ակտերը բողոքարկել: Հատկանշական է, որ Փաստաբանը նշված փաստը հերքելու վերաբերյալ որևէ բացատրություն և/կամ ապացույց Պալատ չի ներկայացրե, ինչը Հանձնաժողովի մետ համոզմունք է ձևավորել, որ Փաստաբանը ոչ միայն առաջին ատյանի ընդհանուր դատարանում չի ցուցաբերել Դիմողին բարեխիղճ իրավական օգնություն, այլ նաև չի բողոքարկել առաջին ատյանի եզրափակիչ դատական ակտը:

Տվյալ դեպքում, թիվ ԵԴ2/37070/02/23 քաղաքացիական գործի վերաբերյալ «Datalex» դատական տեղեկատվական համակարգում առկա տվյալների ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ առաջին ատյանի դատարանի 18.10.2024թ. որոշումը Փաստաբան Ալեքսանդր Մերանգուլյանը չի բողոքարկել:

Ամփոփելով վերոգրյալը՝ Հանձնաժողովն եզրահանգում է, որ թիվ ԵԴ2/37070/02/23 քաղաքացիական գործով Փաստաբանը Դիմողի շահերի պաշտպանության համար չի կատարել անհրաժեշտ գործողությունները վերջինիս իրավունքների արդյունավետ պաշտպանության համար:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ Փաստաբանը հանձնարարաության ընթացքի վերաբերյալ պատշաճ չի տեղեկացրել Դիմողին, հարկ է նշել, որ կարգապահական նիստի ընթացքում Դիմողը հայտնել է, որ զանգերը իրականացվել են հավելվածների միջոցով, որոնց վերծանումը Դիմողի օպերատորը չի տրամադրել:

Այս համատեքստում հատկանշական է, որ Փաստաբանը նշված հանգամանքները չի հերքել, որևէ ապացույց չի ներկայացրել, ինչպես նաև կարգապահական վարույթի շրջանակներում ուղարկված էլեկտրոնային ծանուցումները ստացել է և որևէ դիրքորոշում և/կամ ապացույց չի ներկայացրել: Նշված փաստերը համոզմունք են ձևավորել, որ Փաստաբանը ստանձնած հանձնարարության վերաբերյալ պատշաճ տեղեկություն Դիմողին չի տրամադրել:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանն իր վստահորդի շահերը ներկայացնելիս թույլ է տվել այնպիսի խախտումներ, որոնք չեն տեղավորվում Օրենքով և Կանոնագրքով սահմանված փաստաբանի բարեխիղճ իրավական օգնություն ցուցաբերելու և հանձնարարության կատարման ընթացքի վերաբերյալ վստահորդին կանոնավորապես տեղեկացնելու ողջամիտ սահմաններում:

Նման պայմաններում Հանձնաժողովը, գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացրած բացատրություններն ու ապացույցներն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ Փաստաբանի վարքագծում **առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշները**:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը:

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.10 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամանակը որոշում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:*

Վերը նշված իրավական նորմերի համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի խնդիրներից մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանի վարքագծի կանոններին համապատասխանող վարքագծի ապահովումն է, որը դրսևորվում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված կարգով փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործառույթի իրականացման մեջ:

Օրենքով հստակ նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցների այն տեսակները, որոնք Հանձնաժողովն իրավասու է կիրառել կարգազանց փաստաբանների նկատմամբ: Ընդ որում, Օրենքում ամրագրված են փաստաբանի պատասխանատվության անհատականացման համար կիրառելի չափանիշներ:

Օրենքով Հանձնաժողովին վերապահված կարգապահական գործառույթից և այդ թվում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և կարգապահական տույժ կիրառելու իրավազորությունից հետևում է, որ Հանձնաժողովը ոչ միայն իրավասու է, այլև պարտավոր է յուրաքանչյուր դեպքում իրականացնել փաստաբանի կողմից կատարված արարքի որակում Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում և դրան համապատասխան՝ նշանակել համապատասխան կարգապահական տույժ:

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ այն հանգամանքը, որ Փաստաբանը 2020-2025թթ ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ, ուստի սույն կարգապահական գործով, որ Փաստաբանի նկատմամբ պետք է կիրառել ամենամեղմ՝ «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը:

Միաժամանակ, հետագայում նմանատիպ իրավիճակները կանխարգելելու նպատակով Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում Փաստաբանի նկատմամբ որպես լրացուցիչ տույժ կիրառել «վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի նկատմամբ որպես հիմնական կարգապահական տույժ պետք է կիրառել «նկատողություն», ինչպես նաև՝ որպես լրացուցիչ կարգապահական տույժ՝ «լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել» տույժի տեսակները:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետի, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Ալեքսանդր Ալբերտի Մերանգուլյանի (արտոնագիր՝ թիվ 1958) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «նկատողություն», ինչպես նաև լրացուցիչ տույժ՝ 6 ամսվա ընթացքում պարտադիր վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով 4 ակադեմիական ժամ ժամաքանակով «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-24179-2-Ա
07 մայիսի 2025թ.
ք.Երևան